

Հ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ա Ն Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  
Հ Ե Ռ Ո Ւ Ի Ս Տ Ա Տ Ե Ս Ո Ւ Թ Յ Ա Ն Ե Վ Ռ Ա Դ Ի Ո Յ Ի Ա Ջ Գ Ա Յ Ի Ն  
Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի Ե Վ Լ Ե Ռ Ն Ա Յ Ի Ն Ղ Ա Ր Ա Մ Բ Ա Ղ Ի  
Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Հ Ա Ն Ր Ա Յ Ի Ն Ծ Ա Ռ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ը  
Ե Վ Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Մ Ր Ց Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը Կ Ա Ր Գ Ա Վ Ո Ր Ո Ղ  
Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի

«28» մարտի 2011 թ.

ք. Ստեփանակերտ

Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ ի դեմս հանձնաժողովի նախագահ Գրիգոր Ամայանի, և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ ի դեմս հանձնաժողովի նախագահ Հակոբ Ղահրամանյանի, այսուհետ՝ Կողմեր, հաշվի առնելով հեռուստատեսության և ռադիոյի՝ որպես զանգվածային լրատվության միջոցների, դերը հասարակության մշակութային, կրթական, սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական տեղեկատվության մատչելիության գործում, և այդ կապակցությամբ նշված բնագավառի արդյունավետ զարգացման և խթանման համար, կարևորելով հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում քաղաքականության իրականացման հարցերում Կողմերի պետական կարգավորման ոլորտներում օրենսդրությունների և կիրարկման մեխանիզմների ներդաշնակեցումը, ինչպես նաև Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հանձնաժողովի ինտեգրումը միջազգային կառույցներին, Հանձնաժողովների միջև համագործակցության ամրապնդումը, կնքեցին սույն համագործակցության համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Սույն համաձայնագրի առարկան հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում առկա խնդիրների լուծման, տեղեկատվության տրամադրման, օրենսդրության մեթոդաբանության ու օրենսդրական ակտերի մշակման և կիրառման, ինչպես նաև միջազգային ոլորտի հարցերում համագործակցությունն է:

2. Կողմերը համագործակցում են հետևյալ ուղղություններով.

2.1. հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում կարգավորմանն ուղղված միջոցառումների փորձի փոխանակում.

2.2. հեռուստառադիոհաղորդումների պատրաստման տեխնիկական չափանիշների, ինչպես նաև տեխնիկական միջոցների գործող ստանդարտներին և տրված հավաստագրին համապատասխանության հսկում (այդ թվում նաև՝ համատեղ).

2.3. հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի կարգավորման քաղաքականության զարգացմանը նպաստող միջազգային իրավասու կառույցներին անդամակցության, միջազգային իրավահարաբերություններին մասնակցության հարցերում աջակցություն.

2.4. հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի խթանման նպատակով կազմակերպվող համաժողովներին, սեմինարներին (այդ թվում՝ միջազգային) և այլ միջոցառումներին մասնակցություն և դրա ապահովում, մասնագիտական-ուսումնական և այլ այցերի կազմակերպում և անցկացում:

2.5. հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում միջազգային կապերի զարգացման նպատակով միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին տարեկան առնվազն 2 անգամ մասնակցություն և դրա ապահովում:

2.6. հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ պարզաբանումների և մեկնաբանությունների տրամադրում, ինչպես նաև հեռուստառադիոծրագրերի վերահետարձակման հետ կապված հեղինակային իրավունքների պահպանության հետ կապված խնդիրների լուծման դեպքում համագործակցում:

2.7. հեռուստատեսության և ռադիոյի բնագավառին առնչվող նորմատիվ իրավական ակտերի, հեռուստառադիոհաղորդումների պատրաստման տեխնիկական չափանիշների, տեխնիկական միջոցների ստանդարտների մշակման հարցերում օժանդակության ցուցաբերում:

2.8. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հեռուստառադիոընկերությունների պատմամշակութային և ճանաչողական բնույթի հարորդաշարերի, հաղորդումների, տեսանյութերի (այդ թվում՝ գեղարվեստական և վավերագրական ֆիլմերի) փոխանակմանը նպաստում՝ երկու պետությունների հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների սահմաններում ու հեռուստառադիոծրագրերի, գովազդային ծրագրերի և տեսահոլովակների, հաղորդաշարերի, հաղորդումների, տեսանյութերի (այդ թվում՝ հեռուստաֆիլմերի, տեսաերիզների) համատեղ արտադրությանը և հետարձակմանը օժանդակություն:

2.9. նյութատեխնիկական բազայի ու նոր տեխնոլոգիաների ներդրման հարցերում աջակցություն:

2.10. սույն համաձայնագրով սահմանված համագործակցության իրավական և կազմակերպչական ուղղությունների շրջանակներում անհրաժեշտ այլ տեղեկատվության տրամադրում և (կամ) փոխանակում և (կամ) գործողությունների իրականացում:

2.11. Հանձնաժողովների մասնագիտական ռեսուրսների և տեխնիկական միջոցների փոխօգնություն *(2.11-րդ կետը լրաց. 25.03.2013թ.):*

3. Սույն համաձայնագրի դրույթների իրագործման համար Կողմերը ստեղծում են աշխատանքային խմբեր, կազմակերպում են համատեղ խորհրդակցություններ, աշխատանքային հանդիպումներ, քննարկումներ, թեմատիկ սեմինարներ, ապահովում Կողմի աշխատակազմի աշխատակիցների մասնակցությունը մյուս Կողմի կողմից կազմակերպվող նիստերին և միջոցառումներին: Կողմերից յուրաքանչյուրը կարող է նշանակել իրավասու ներկայացուցիչներ սույն համաձայնագրի գործողության շրջանակներում հանդես գալու համար:

4. Կողմերի հարցումներն ու պատասխաններն իրականացվում են գրավոր ձևով, իսկ հրատապ պահանջի դեպքում՝ ֆաքսիմիլային և էլեկտրոնային կապի միջոցների օգտագործմամբ՝ անհրաժեշտության դեպքում՝ հետագա գրավոր հավաստմամբ:

5. Սույն համաձայնագրի գործողության շրջանակներում իրականացվող հանդիպումների օրակարգը, վայրը, օրերը և այլ հարցերը, կարգավորվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

6. Կողմերն ապահովում են ստացված տեղեկատվության գաղտնիության պահպանումը՝ համաձայն յուրաքանչյուր Կողմի երկրում գործող օրենսդրության պահանջների: Կողմերը կարող են հրաժարվել համագործակցությունից՝ հաշվի առնելով առևտրային և այլ գաղտնիքի պաշտպանության ոլորտում գործող պահանջները:

7. Սույն համաձայնագիրը կնքվում է երեք տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:


8. Սույն համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել փոխադարձ համաձայնությամբ:

9. Սույն համաձայնագիրը կարող է լուծվել Կողմի նախաձեռնությամբ՝ առնվազն մեկ ամիս առաջ մյուս Կողմին ծանուցում ներկայացնելու միջոցով:

10. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, որոնք մեկական օրինակով պահվում են Կողմերի մոտ:

Հայաստանի Հանրապետության  
հեռուստատեսության և ռադիոյի  
ազգային հանձնաժողովի նախագահ

Գ. ԱՄԻՆՅԱՆ



Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության հանրային  
ծառայությունները և տնտեսական  
մրցակցությունը կարգավորող  
պետական հանձնաժողովի նախագահ

Ղ. ՂԱԴՐԱՆՅԱՆ

